# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի սեպտեմբերի 13-ին կայացած Գիտական Խորհրդի N2 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քեյյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 23-ը (ցուցակը կցվում է)

Ուսումնական տարվա առաջին նիստի (ոչ առցանց) անցկացման կապակցությամբ, խորհրդի նախագահ **Սարգիս Քեյյանը** հանդես եկավ շնորհավորական ուղերձով: Նա հույս հայտնեց, որ նոր ուսումնական տարին կլինի առավել հագեցած և արդյունավետ, քանի որ որակյալ կրթությունը ֆակուլտետի գործունեության մեջ միշտ եղել է գերակա նպատակ:

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քեյյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

### Օրակարգ

1. **2025-2026 ուստարվա ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում** /զեկ. գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/

2. **Աշխատանքային կարգապահություն և ուսանողների հաճախումների քննարկում** /զեկ.դեկան Ս.Ս.Քեյյան/

3. **2025/2026 ուստարվա ընդունելության արդյունքների քնարկում** /զեկ.դեկան Ս.Ս.Քեյյան/

4. **2024/2025 ուստարվա ուսումնական պրակտիկաների արդյունքների քննարկում** /զեկ. ամբիոնի վարիչներ/

5. **2024/2025 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների քննարկում** /զեկ.գրասենյակի դեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

6. **Անվանական կրթաթոշակ ստանալու թեկնածուների առաջադրում** /զեկ. գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/

7. **Ֆակուլտետի հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում** /զեկ. ամբիոնի վարիչներ/

8. **Պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու հարցի քննարկում**

/զեկ. ամբիոնի վարիչներ/

9. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1. *ԼՍԵՑԻՆ* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար դոց. Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը ֆակուլտետի **Գիտական խորհրդի 2025/2026 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ**: Նա նշեց, որ ներկայացված 2025/2026 ուս.տարվա աշխատանքային պլանը կազմվել է հաշվի առնելով նաև ուսումնական վարչության կողմից ուղարկված «Ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը»: Աշխատանքային պլանի նախագիծը էլեկտրոնային եղանակով նախապես տրամադրվել է Խորհրդի անդամներին՝ ծանոթանալու, առաջարկություններ և փոփոխություններ կատարելու նպատակով:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* **Հաստատել** ներկայացված՝ 2025/2026 ուս.տարվա Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտական խորհրդի աշխատանքային պլանը՝ առանց փոփոխություններ կատարելու (աշխ.պլանը կցվում է):

2. *ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քեյյանի** հաղորդումը **աշխատանքային կարգապահություն, ուսանողների հաճախելիության և դասալսումների կազմակերպման վերաբերյալ:** Դեկան Ս.Ս.Քեյյանն իր խոսքում մասնավորապես խոսեց ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման մասին: Խորհրդի ուշադրությունը հրավիրեց e-learning և registrar հարթակների հետևողական լրացման, առարկայական ծրագրերի, գրականության և այլ ուսումնական նյութերի ինչպես նաև առարկաների գնահատման բաղադրիչների տեղադրման վրա: Դեկան Ս.Ս.Քեյյանը հորդորեց գրանցել ուսանողների բացակայությունները՝ մասնակցության համար հատկացվող միավորի անսխալ արժանագրման և ուսանողների հաճախումները խթանելու համար: Ներկայացրեց

դասալսումների ներդրման նպատակներն ու կազմակերպումը, որն իրականացնելու է առանց ժամանակացույցի նախնական հաստատման:

*ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:*

*3. ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քեյյանի** հաղորդումը **2025/2026 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ**: Նա մանրամասնորեն ներկայացրեց ֆակուլտետ ընդունված ուսանողների թիվն ըստ մասնագիտությունների (բակալավրիատ, մագիստրատուրա) և գնահատեց այն, որպես բավականին լավ ցուցանիշ: Հաղորդման ընթացքում **դեկան Ս.Ս.Քեյյանը** ընդունելության բարձր թվերը կապեց մի քանի հանգամանքների հետ և հույս հայտնեց, որ արձանագրված արդյունքները պահպանելուց զատ նաև կավելանան:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* **Ընդունել ի գիտություն:**

*4. ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Սերվիսի*** ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, ***Ընդհանուր աշխարհագրության*** ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, ***Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության*** ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, ***Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման*** ամբիոնի վարիչ դոց.Ա.Մ.Մանուկյանի, ***Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի*** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա ուսումնական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ**: Հաղորդման ընթացքում հակիրճ ներկայացվեցին պրակտիկաների կազմակերպման ընթացքը և արդյունքները: Ամբիոնների վարիչները խոսեցին երթուղիների պակաս լինելու, ինչպես նաև «Սերվիս» մասնագիտության պրակտիկան երթուղայինից բազային պրակտիկայի վերափոխելու նպատակահարմարության մասին: Հնչեց նաև հակառակ՝ բազային ձևաչափից հրաժարվելու միտքը՝ հօգուտ երթուղային ձևաչափի միևնույն ժամանակ ավելացնելով երթուղիների քանակը, ինչպես նաև դիտարկել ուսումնական պրակտիկայի վայրերն ընդլայնելու հնարավորությունները: Ամբիոնների վարիչները նշեցին նաև, որ պրակտիկայի

ավարտին ուսանողների ներկայացրած հաշվետվությունները, քարտեզներն և նախագծերը՝ համապատասխանել են պահանջվող ձևաչափին: Ամբիոնների վարիչներն իրենց խոսքում ներկայացրին նաև պրակտիկան վերահանձնած ուսանողների թվային տվյալներ:

*ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի **պրոֆ. Ս.Հ.Հայրոյանը** փորձեց հստակեցնել, թե ո՞ր մեթոդներից է անցկացվել ուսումնական պրակտիկան և արդյո՞ք ամբիոնում կան բարձր մակարդակով ուսումնական պրակտիկա անցկացնող մասնագետներ:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի **պրոֆ. Ս.Հ.Հայրոյանն** առաջարկեց ուսանողների կողմից ներկայացվող պրակտիկաների հաշվետվություններն ընդունել ամբիոնի նիստերի ժամանակ՝ նախապես ձևավորված հանձնաժողովի ներկայությամբ:

**Դեկան Ս.Ս.Քելյանը** պաշտպանեց ուսանողների կողմից պրակտիկաների ավարտական հաշվետվությունները հանձնաժողովի ներկայությամբ ներկայացնելու առաջարկությունը:

*ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը**՝ ամփոփելով ամբիոնների վարիչների հաղորդումը ներկայացրեց երկարատև կազմակերպչական աշխատանքը, որը նախորդում է ուսումնական պրակտիկայի մեկնարկին: Ներկայացրեց նաև ուսումնական պրակտիկային մասնակցած (հրամանագրված ուսանողների, դրական և բացասական գնահատական ստացած ուսանողների) թվային տվյալներ:

**Դեկան Ս.Ս.Քելյանը** խոսեց պրակտիկայի անցկացման ընթացակարգի ինչպես նաև դրա վերանայման մասին: Խոսքի ավարտին դեկան Ս.Ս.Քելյանը ամբիոնների վարիչների ուշադրությունը հրավիրեց ծանրաբեռնվածությունները կազմելիս ուսումնական պրակտիկայի ղեկավարների ընտրությանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* **Ընդունել ի գիտություն:**

*5. ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2024/2025 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների վերաբերյալ:** Նա ներկայացրեց տարբեր պատճառներով հեռացված ուսանողների թվային տվյալներ ըստ մասնագիտությունների՝ **Սերվիս** մասնագիտություն – 2 ուսանող, **Երկրաբանություն** մասնագիտություն – 1 ուսանող, **Քարտեզագրություն և կադաստրային գործ** մասնագիտություն – 5 ուսանող, **Աշխարհագրություն** մասնագիտություն – 0 ուսանող: Ներկայացրեց «12 կրեդիտի» շրջանակներում առարկայական պարտք ունեցող ինչպես նաև «դասընթացի կրկնություն» մնացած ուսանողների թվային տվյալներ: **Գ.Փ.Ալեքսանյանն** իր խոսքում հորդորեց դասախոսներին մանրամասնորեն ներկայացնել ուսանողներին «դասընթացի կրկնություն» մնալու կարգը:

*ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քեյյանը** ցավով խոսեց հեռացված՝ ակադեմիական անբավարար առաջադիմությամբ ուսանողների մասին: Նա հույս հայտնեց, որ անբավարար առաջադիմության պատճառով ուսանողների հեռացումը համալսարանից յուրովի ազդակ է մյուս ուսանողների համար:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* **Ընդունել ի գիտություն**

*6.*

*6.1 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար դոց.Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը **«Ղևոնդ Ալիշան»-ի** անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակ հատկացնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածուների (4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողներ) անվանացանկն ու ներկայացրած փաստաթղթերը.

**Քրիստինե Արթուրիկի Սարգսյան**՝ Աշխարհագրության մաս-յան բակալավրիատի 4-րդ կուրս

**Հովհաննիսյան Լյուդվիգ Մինասի**՝ Աշխարհագրության մաս-յան բակալավրիատի 3-րդ կուրս

**Եղիազարյան Սոնա Տիգրանի**՝ Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 1-ին կուրս

**Մինասյան Նարե Հրաչի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 1-ին կուրս

**Բալույան Արփինե Անատոլիի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 1-ին կուրս

**Անտոնյան Մանե Գալուստի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 1-ին կուրս

**Բաղդասարյան Լենա Կարենի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 1-ին կուրս

**Միքայելյան Սուսաննա Ալբերտի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 2-րդ կուրս

**Մկրտչյան Անահիտ Մեխակի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 2-րդ կուրս

**Մանուկյան Նելլի Խաչիկի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 2-րդ կուրս

**Արզումանյան Վահիկ Գևորգի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 2-րդ կուրս

**Ալեքսանյան Անահիտ Արմենի՝** Աշխարհագրության մաս-յան մագիստրատուրայի 2-րդ կուրս

**Սիլվա Գեղամի Ավետիսյան՝** Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանն** առաջարկեց 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում **«Ղևոնդ Ալիշան»**-ի անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը դնել քվեարկության և երաշխավորել **«Ղևոնդ Ալիշան»**-ի անվան կրթաթոշակը ստանալու:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 23, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 Աշխարհագրության բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող **Քրիստինե Արթուրիկի Սարգսյանին** <u>երաշխավորել</u> **«Ղևոնդ Ալիշան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

*6.2 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար դոց.Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը **«Տիգրան Չրքաշյան»-ի** անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակ հատկացնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ Երկրաբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող **Ալեն Կարենի Հովհաննիսյանի** ներկայացրած փաստաթղթերը:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանն** առաջարկեց 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում **«Տիգրան Չրքաշյան»-ի** անվան կրթաթոշակ հատկացնելու հարցը դնել քվեարկության և **Ալեն Կարենի**

**Հովհաննիսյանին** երաշխավորել **«Տիգրան Զրբաշյան»-ի** անվան կրթաթոշակ ստանալու:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 23, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0, Երկրաբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող **Ալեն Կարենի Հովհաննիսյանին** <u>երաշխավորել</u> **«Տիգրան Զրբաշյան»-ի** անվան կրթաթոշակ հատկացնելու:

*6.3 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար դոց.Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը **«Բնապահպանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակ հատկացնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու Երկրաբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող **Արամ Արայիկի Ղազարյանի** ներկայացրած փաստաթղթերը:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քեյյանն** առաջարկեց 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում **«Բնապահպանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ հատկացնելու հարցը դնել քվեարկության և **Արամ Արայիկի Ղազարյանին** երաշխավորել **«Բնապահպանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակը ստանալու:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 23, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0, Երկրաբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող **Արամ Արայիկի Ղազարյանին** <u>երաշխավորել</u> **«Բնապահպանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

*6.4 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար դոց.Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց

անվանական կրթաթոշակ հատկացնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու Երկրաբանություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Պայլին Օնիկի Մուրադյանի** ներկայացրած փաստաթղթերը:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քեյյանն** առաջարկեց 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ հատկացնելու հարցը դնել քվեարկության և **Պայլին Օնիկի Մուրադյանին** երաշխավորել **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ ստանալու:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 23, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0, Երկրաբանություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Պայլին Օնիկի Մուրադյանին** <u>երաշխավորել</u> **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի** անվան կրթաթոշակ հատկացնելու:

*7.*

*7.1 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի** վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի **3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Լենա Յուրիկի Մարալյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Լենա Յուրիկի Մարալյանին ատեստավորել՝** ուսումը շարունակելու համար:

*7.2 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի** վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ**

**Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի 4-րդ տարվա **հեռակա ուսուցման ասպիրանտ Մարիամ Կիմիկի Պետրոսյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **4-րդ տարվա** հեռակա ուսուցման ասպիրանտ **Մարիամ Կիմիկի Պետրոսյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*7.3 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանին** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

*7.4 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի** ամբիոնի վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հայցորդ **Իրինա Վանոյի Սահակյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի** ամբիոնի հայցորդ **Իրինա Վանոյի Սահակյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*7.5 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի** ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի 2-րդ տարվա հեռակա

ուսուցման ասպիրանտ **Արմինե Հայկասարի Զուրաբյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմինե Հայկասարի Զուրաբյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

*7.6 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրությա**ն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*7.7 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սոնա Կարենի Տերտերյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սոնա Կարենի Տերտերյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*7.8 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սվետա Արսենի Սաֆարյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սվետա Արսենի Սաֆարյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*7.9 ԼՍԵՑԻՆ.* ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության** ամբիոնի վարիչ **դոց.Մ.Ս.Մկրտչյանի** հաղորդումը ամբիոնի հայցորդ **Ալեքսանդր Վահանի Խաչատրյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ **Ալեքսանդր Վահանի Խաչատրյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

*8.*

*8.1 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի հաղորդումը*** պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Մ.Ս.Մկրտչյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի ***հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի*** թեկնածությունը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել ***Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական***

*երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի* թեկնածությունը, որպես *պրոֆեսոր Ս.Հ.Հայրոյանի օգնական*:

*8.2 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի*** հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ:

Ա.Ս.Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող ***Նարեկ Հունանի Պետրոսյանի*** թեկնածությունը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող ***Նարեկ Հունանի Պետրոսյանի*** թեկնածությունը, որպես Քարտեզագրություն և կադաստրային գործ կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ **Ա.Հ.Հովհաննիսյանի** օգնական:

*8.3 ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Ա.Թ.Գրիգորյանի*** հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Ա.Թ.Գրիգորյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած **«Ջրաօդերևութաբանություն»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ ***Անահիտ Արմենի Ալեքսանյանի*** և ***Սաթենիկ Սպարտակի Գույյանի,*** ինչպես նաև **«Հասարակական աշխարհագրություն»** կրթական ծրագրի

մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող *Անահիտ Մեխակի Մկրտչյանի* թեկնածությունները.

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել

1. **«Ջրաօդերևութաբանություն»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Անահիտ Արմենի Ալեքսանյանի** թեկնածությունը, որպես **դոցենտ Արսեն Թորգոմի Գրիգորյանի** օգնական:
2. **«Ջրաօդերևութաբանություն»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Սաթենիկ Սպարտակի Գուլյանի** թեկնածությունը, որպես **դոցենտ Վարդուհի Գուրգենի Մարգարյանի** օգնական
3. **«Հասարակական աշխարհագրություն»** կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող *Անահիտ Մեխակի Մկրտչյանի* թեկնածությունը, որպես **դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի** օգնական

*9. Ընթացիկ հարցեր*

9.1 *ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան **Ս.Ս.Քեչյանի** հաղորդումը ընթացիկ տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման վերաբերյալ:

*ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանն** իր խոսքում ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների, ինչպես նաև ՀԲ-ով (հետազոտական բաղադրիչ) դասընթացների վերնագրերի ներկայացման վերջնաժամկետները:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* **Ընդունել ի գիտություն:**

9.2 *ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը գիտակրթական փորձի փոխանակման վերաբերյալ: Հաղորդման ընթացքում ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանն առաջարկեց հանդիպումների

ընթացքում քննարկել e-learning հարթակի կիրառման հնարավորությունները սահմանված ժամանակացույցով (յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթին):

***ՈՐՈՇԵՑԻՆ.*** **Ընդունել ի գիտություն:**

*Գիտական խորհրդի նախագահ՝* *Ա.Ա.Քեյան*

*Գիտական խորհրդի քարտուղար՝* *Ե.Ա.Մանուկյան*